



Կապիտալ  
ասեթ  
մեներջմենք

**ԿԱՍ Պետական արժեթղթերի Ֆոնդի**  
Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն  
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Ապրիլ 2023թ.  
Երևան

## ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ

### Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորի եզրակացություն
- 5 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
- 8 Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների մասին հաշվետվություն
- 9 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
- 10 Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ



## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*ԿԱՄ Պետական արժեթղթերի Ֆոնդի Սասնակիցներին՝*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ԿԱՄ Պետական արժեթղթերի Ֆոնդի (այսուհետ՝ «Ֆոնդ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, փայտերերին վերագրելի գուտ ակտիվների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի ֆինանսական վիճակը՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՄԻ կանոնագիրք), և պահպանել ենք ՀՄԷՄԻ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ֆոնդը լուծարելու կամ Ֆոնդի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես վարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:



## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա: ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ֆոնդին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:




- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց՝ ի թիվս այլ հարցերի տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

28 ապրիլի, 2023թ.  
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA  
Տնօրեն



Սերգեյ Յակովլև, FCCA  
Աուդիտի ղեկավար

**ԿԱՄ Պետական արժեթղթերի ֆոնդ**

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	<b>Ծան.</b>	<b>2022թ. հազ. դրամ</b>	<b>2021թ. հազ. դրամ</b>
Տոկոսային եկամուտ	5	61,666	52,657
Տոկոսային ծախս	6	(15,573)	(4,967)
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ կորուստ	7	(47,824)	(30,557)
Ներդրումային կառավարման վճարներ	8	(4,979)	(6,154)
Պահառուական վճարներ		(793)	(958)
Միջնորդավճարներ		(344)	(34)
Արտարժույթի վերագնահատումից զուտ վնաս		(15,819)	(9,753)
<b>(Վնաս)/շահույթ մինչև հարկումը</b>		<b>(23,666)</b>	<b>234</b>
Շահութահարկի գծով փոխհատուցում		(53)	(64)
<b>(Վնաս)/շահույթ հարկումից հետո</b>		<b>(23,719)</b>	<b>170</b>
Այլ համապարփակ ֆինանսական եկամուտ		-	-
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>(23,719)</b>	<b>170</b>
<b>Փայտերերին վերագրելի զուտ ակտիվների աճ/ (նվազում)</b>		<b>(23,719)</b>	<b>170</b>

*Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-29) հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. ապրիլի 28-ին, ստորագրությամբ՝*

Գեղեոն Խերոյան  
Գլխավոր գործադիր տնօրենի ժ.պ.

Գայանե Վարդանյան  
Գլխավոր հաշվապահ  
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		3,940	110,779
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	9	659,173	619,459
Շահութահարկի գծով կանխավճար		-	8
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>663,113</b>	<b>730,246</b>
<b>Պարտավորություններ</b>			
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	10	166,640	120,354
Շահութահարկի գծով պարտավորություններ		15	-
Այլ պարտավորություններ		556	716
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>167,211</b>	<b>121,078</b>
<b>Փայատերերին վերագրելի գուտ ակտիվներ</b>	11	<b>495,902</b>	<b>609,168</b>
<b>Ընդամենը փայատերերին վերագրելի գուտ ակտիվներ և պարտավորություններ</b>		<b>663,113</b>	<b>730,238</b>

ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն  
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ստացված տոկոսներ	58,481	53,892
Վճարված տոկոսներ	(15,079)	(4,880)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում	(314,449)	(202,956)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	216,579	32,718
Վճարված գործառնական ծախսեր	(6,575)	(7,254)
Վճարված շահութահարկ	(31)	(93)
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացված զուտ գումարներ	45,793	75,590
Հետզնման պայմանագրերի գծով ստացված զուտ գումարներ	-	120,266
<b>Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>(15,281)</b>	<b>67,283</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Փայերի թողարկումից ստացված միջոցներ	76,241	16,486
Փայերի մարման գծով վճարված միջոցներ	(165,497)	(87,190)
<b>Զուտ դրամական հոսքեր վճարված Ֆինանսավորման գործունեությունից</b>	<b>(89,256)</b>	<b>(70,704)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b>	<b>(104,537)</b>	<b>(3,421)</b>
<b>Դրամական միջոցների մնացորդներ տարվա սկզբում</b>	<b>110,779</b>	<b>123,953</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,302)	(9,753)
<b>Դրամական միջոցների մնացորդներ տարվա վերջում</b>	<b>3,940</b>	<b>110,779</b>





ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ  
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

---

**Բովանդակություն**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	3
1. Ֆոնդի վերաբերյալ.....	11
2. Պատրաստման հիմունքներ .....	14
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ .....	17
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում.....	17
5. Տոկոսային եկամուտ.....	21
6. Տոկոսային ծախս.....	21
7. Ջուտ կորուստ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից.....	22
8. Ներդրումային կառավարման վճարներ.....	22
9. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ .....	22
10. Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով .....	22
11. Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ.....	22
12. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն.....	24
Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ.....	29



**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

**1. Ֆոնդի վերաբերյալ**

ԿԱՍ Պետական Արժեթղթերի Ֆոնդը (այսուհետև՝ ԿԱՍ ՊԱՖ կամ Ֆոնդ) բաց պայմանագրային ներդրումային ֆոնդ է: Հանդիսանալով ներդրումային Ֆոնդ, այն ունի կարճաժամկետից մինչև երկարաժամկետ աճի նպատակներ: Ֆոնդը հիմնադրվել է 2013թ. ապրիլի 30-ին՝ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) անսահմանափակ ժամկետով, որպես բաց ներդրումային ֆոնդ՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) թիվ 123-Ս որոշման: Ֆոնդի ներդրումային գործունեությունը կառավարվում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (այսուհետև՝ Կառավարիչ) կողմից, գրանցման համար՝ 1: Կառավարչի գտնվելու վայրն է. ՀՀ, ք. Երևան, Արգիշտի փողոց, 7 շենք, 1-ին հարկ, գրասենյակ 101: Կառավարչի միակ բաժնետերն է Տիգրան Կարապետյանը:

Ֆոնդի ներդրումային նպատակն է հասնել կայուն միջնաժամկետ եկամտաբերության՝ միևնույն ժամանակ ապահովելով կապիտալի անվտանգությունը, այն ներդնելով տեղական շուկայում դիվերսիֆիկացված կապիտալի արժեթղթերի, տոկոսակիր արժեթղթերի և այլ ածանցյալ գործիքների պորտֆելում: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել պետական արժեթղթերում և պետական արժեթղթերի ածանցյալ գործիքներում, այդ թվում՝ կանոնակարգվող շուկայից դուրս գտնվող ածանցյալ գործիքներում՝ պայմանով, որ գործարքները կիրականացվեն կարգավորվող պայմանագրային կողմերի հետ և գործիքը կտրամադրի բավարար իրացվելիություն և իրական արժեքի որոշման հնարավորություն:

Ֆոնդի փայերը ենթակա են մարման՝ դրանց տնօրինողի հայեցողությամբ: Փայերը չեն կարող գնվել/վաճառվել արժեթղթերի շուկայում:

**Գործարար միջավայր**

Ֆոնդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ֆոնդի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը, Արցախի Հանրապետությունում պատերազմը և հակամարտության կարգավորման շուրջ ընթացող քաղաքական զարգացումները զգալի ազդեցություն են ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Սակայն, հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի տնտեսության՝ հատկապես ֆինանսական հատվածի վրա, էական ազդեցություն է ունեցել ռուս-ուկրաինական դեռևս ընթացող պատերազմը, որը հանգեցրել է մարդկային կապիտալի և ֆինանսական ռեսուրսների անսխալադեպ ներհոսքի, ինչն իր հերթին մեծապես նպաստել է Հայաստանի տնտեսության երկնիշ աճին: Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Ֆոնդի կառավարիչը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ֆոնդի գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանախատեսելիությունից՝ Ֆոնդի կառավարիչը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ֆոնդի հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ֆոնդի կառավարչի գնահատականը Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

Հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները Ֆոնդի կառավարիչը որդեգրել է չափավոր-ակտիվ ռազմավարություն ավելորդ ռիսկերից խուսափելու նպատակով:



**ԿԱՄ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**Ներդրումների ամփոփագիր**

<b>Արժեթղթերի նկարագիրը</b>	<b>Արժույթը</b>	<b>Արժե- կտրոնի եկամտա- բերություն</b>	<b>Արժեկտրոնի վճարման պարբերա- կանություն</b>	<b>Մարման Ժամկետ</b>	<b>31 դեկտեմբերի 2022թ.</b>		<b>31 դեկտեմբերի 2021թ.</b>	
					<b>Անվան. արժեք Հազ. դրամ</b>	<b>Իրական արժեք Հազ. դրամ</b>	<b>Անվան. արժեք Հազ. դրամ</b>	<b>Իրական արժեք Հազ. դրամ</b>
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	13%	կիսամյակային	17/02/2032	200,000	227,145	200,000	246,836
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	9%	կիսամյակային	29/10/2029	10,000	9,072	10,000	9,633
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	8%	կիսամյակային	29/10/2023	100,000	100,294	100,000	99,893
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	13%	կիսամյակային	29/10/2036	20,000	21,458	20,000	24,851
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	9%	կիսամյակային	29/04/2022	-	-	52,000	52,896
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	8%	կիսամյակային	29/10/2031	150,000	152,566	150,000	133,847
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	7%	կիսամյակային	29/04/2025	-	-	55,000	51,503
Պետական պարտատոմսեր	ԱՄՆ դոլար	4%	Կիսամյակային	26/09/2029	78,714	66,509		
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	7%	Կիսամյակային	29/04/2026	30,000	26,374		
Պետական պարտատոմսեր	ՀՀ դրամ	9%	կիսամյակային	29/04/2027	60,000	55,755		
						<b>659,173</b>		<b>619,459</b>

## **2. Պատրաստման հիմունքներ**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 12-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ֆոնդի գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

### ***Չափման հիմքերը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա՝ բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

### ***Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ***

***ա) 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ:***

***1) ՖՀՄՍ տարեկան բարեփոխումներ 2018-2020թթ.***

2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ թողարկեց նվազ կարևորության փոփոխություններ ՖՀՄՍ 1. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում», ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ», ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» ստանդարտներին և ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտին ուղեկցող ցուցադրական օրինակներում:

***2) ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» (Փոփոխություն – Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագիրը կատարելու ծախսեր)***

2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 37-ի լրացումներ՝ ավելացնելով 68Ա պարագրաֆը՝ պայմանագիրը որպես անբարենպաստ պայմանագիր ճանաչելիս գնահատման ընթացքում ներառվող ծախսերը որոշակիացնելու նպատակով: Ակնկալվում է, որ այս փոփոխությունների արդյունքում ավելի մեծ քանակությամբ պայմանագրեր կհամարվեն անբարենպաստ, քանի որ փոփոխությունները ընդլայնում են այն ծախսերի շրջանակը որոնք ներառվում են անբարենպաստ պայմանագրերի գնահատման մեջ:

***3) ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ (Փոփոխություն – Նախքան նպատակային նշանակությամբ օգտագործում ստացվող մուտքեր).***

2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 16 փոփոխություններ, որոնք արգելում են ընկերություններին ակտիվը օգտագործման նախապատրաստելու ընթացքում ստացվող մուտքերի նվազեցումը համապատասխան հիմնական միջոցների սկզբնական արժեքից: Փոխարենը,



**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

ընկերությունները պետք է ճանաչեն համապատասխան մուտքերը վաճառքներից և դրանց վերաբերվող ծախսերը եկամուտների և ծախսերի կազմում և ոչ թե նվազեցնեն գույքի սկզբնական արժեքից:

Նոր ստանդարտները, մեկնաբանություններ և փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 01.01.2022թ.-ից հետո չունեն նշանակալի ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

***բ. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ***

***1) ՖՀՄՄ 17 Ապահովագրական պայմանագրեր:***

ՖՀՄՄ 17 ներկայացրեց ապահովագրական պայմանագրերի հաշվառման միջազգայնորեն հետևողական մոտեցում: Նախքան ՖՀՄՄ 17 ամբողջ աշխարհով առկա էին նշանակալի տարբերություններ, որոնք կապված էին ապահովագրական պայմանագրերի հաշվառման և բացահայտումների հետ, քանի որ ՖՀՄՄ 4 թույլատրում էր նախկինում կիրառվող բազմաթիվ (ոչ ՖՀՄՄ) մոտեցումների կիրառման շարունակություն: ՖՀՄՄ 17-ի կիրառման արդյունքում նշանակալի փոփոխություններ կպահանջվեն բազմաթիվ ապահովագրական ընկերությունների համար, առաջ քաշելով գոյություն ունեցող համակարգերի և ընթացակարգերի ճշգրտումներ: Նոր ստանդարտը դիտարկում է ապահովագրական պայմանագրերը որպես ֆինանսական գործիքի և ծառայության մատուցման պայմանագրերի, որոնց զգալի մասը ժամանակահատվածի ընթացքում էապես փոփոխվող հասույթ է գեներացնում համադրություն: Այսպիսով այն հետևյալ մոտեցումներն է որդեգրում.

- Միաձուլում է ապագա դրամական հոսքերի ներկա չափումը շահույթը պայմանագրով մատուցվող ծառայությունների մատուցման ժամանակի ընթացքում ճանաչման հետ
- Ներկայացնում է ապահովագրական ծառայությունների արդյունքների (ներառյալ ապահովագրական հասույթը) տարանջատումը ապահովագրության ֆինանսական եկամուտներից և ծախսերից, և
- Պահանջում է կազմակերպությունից կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն յուրաքանչյուր պորտֆելի մասով առ այն, թե ճանաչել արդյոք ապահովագրության ֆինանսական եկամուտները և ծախսերը ամբողջությամբ եկամտի և ծախսերի կազմում, թե որոշները ճանաչել այլ համապարփակ արդյունքի կազմում:

ՖՀՄՄ 17 թողարկումից հետո կատարվել են փոփոխություններ և կիրառման ժամկետի հետաձգումներ:

***2) Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (ՀՀՄՄ 1 և ՖՀՄՄ Գործնական Հայտարարության 2 փոփոխություն):***

2021 թվականի փետրվարին ՀՀՄՄԽ թողարկեց ՀՀՄՄ 1 փոփոխություն, որը փոփոխեց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերբերվող բացահայտման պահանջները «Նշանակալի հաշվապահական հաշվառման քաղաքականությունից» «հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության»: Փոփոխությունները պարունակում են ուղեցույց այն մասին, թե որ դեպքերում է, որ հաշվապահական հաշվառման վերաբերյալ տեղեկատվությունը հավանական է, որ կդիտարկվի էական:

ՀՀՄՄ 1 փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ ավելի ուշ սկսվող ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է նաև վաղ կիրառումը: Քանի որ ՖՀՄՄ Գործառնական հայտարարությունները ոչ պարտադիր ուղեցույցներ են, ՖՀՄՄ գործնական հայտարարություն 2-ի համար ուժի մեջ մտնելու պարտադիր ամսաթիվ սահմանված չէ:

**3) Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)**

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 8 փոփոխություն, որի միջոցով ՀՀՄՍ 8-ում ավելացվեց հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը: Փոփոխությունները պարզաբանեցին նաև, որ մուտքային տվյալների և չափման մեթոդների փոփոխությունները նույնպես համարվում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություն, բացառությամբ այն դեպքերի երբ դրանք հանդիսանում են նախորդ տարիների սխալի ուղղման արդյունք:

**4) Վարձակալության գծով պարտավորություն «Վաճառք և հետագա վարձակալության» դեպքում (ՖՀՄՍ 16 փոփոխություն):**

ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեն 2020 թվականի հունիսին թողարկել է օրակարգային որոշում՝ Վաճառք և հետագա վարձակալություն փոփոխական վճարների պարագայում: Այս խնդիրը հասցեագրվել է ՀՀՄՍԽ մի քանի առումներով: ՀՀՄՍԽ-ն թողարկել է վերջնական փոփոխությունները 2022 թվականի սեպտեմբերին: Փոփոխությունները պահանջում են վաճառող-վարձակալից որոշել «վարձակալության վճարները» կամ «վերանայված վարձակալության վճարները» այնպես, որ վաճառող-վարձակալը չճանաչի որևիցե օգուտ/վնաս, որը վերաբերվում է իր կողմից պահպանվող օգտագործման իրավունքին:

**5) ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (Փոփոխություն – Պարտավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ-ընթացիկ ներկայացում):**

2020 թվականի հունվարին ՀՀՄՍԽ թողարկեց ՀՀՄՍ 1՝ պարտավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգում փոփոխությունը, որը հետագայում մասամբ փոփոխվեց 2022 թվականի հոկտեմբերին թողարկված «Սահամանփակող դրույթներով (կովենանտներով) ոչ ընթացիկ պարտավորություններ» փոփոխությամբ: Փոփոխությունները պահանջում են, որպեսզի ընկերության՝ պարտավորության մարման հետաձգման իրավունքն հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն 12 ամսվա ընթացքում, պետք է ունենա իմաստ և առկա լինի հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորության դասակարգման վրա ազդեցություն չի թողնում ընկերության՝ պարտավորության մարման հետաձգման իրավունքից հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն 12 ամսվա ընթացքում օգտվելու հավանականությունը: COVID-19 համավարկի արդյունքում Խորհուրդը հետաձգել է փոփոխության կիրառումը մեկ տարով՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

**6) ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (Փոփոխություն – Սահամանփակող դրույթներով (կովենանտներով) ոչ-ընթացիկ պարտավորություններ)**

Պարտավորությունների՝ որպես ընթացիկ կամ ոչ-ընթացիկ ներկայացում փոփոխությանը հաջորդիվ, ՀՀՄՍԽ ՀՀՄՍ 1 լրացուցիչ փոփոխություններ թողարկեց 2022 թվականի հոկտեմբերին: Եթե ընկերության՝ մարման հետաձգման իրավունքը կապվում է որոշակի պայմաններին համապատասխանության հետ, նման պայմանները ազդում են հաշվետու ամսաթվի դրությամբ հետաձգման իրավունքի առկայության վրա այն դեպքում, եթե ընկերությունը պետք է ապահովեր նշված պայմաններին համապատասխանությունը մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակահատվածը, կամ դրա դրությամբ և չեն ազդում՝ եթե պայմանների համապատասխանությունն պետք է ապահովվի հաշվետու ամսաթվից հետո: Փոփոխությունները նաև պարզաբանում են «մարում» եզրույթի իմաստը՝ պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման նպատակով:

Հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտները մեկնաբանությունները և փոփոխությունները, չունեն էական ազդեցություն Ֆոնդի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:



### **3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Ֆոնդը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

#### ***Իրական արժեք***

Ֆոնդը ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Ֆոնդը մի շարք ակտիվներ չափում է իրական արժեքով (Ծան.9)

### **4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում**

Իր գործունեության արդյունքում Ֆոնդը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ
- Արտարժույթային ռիսկ

Ֆոնդը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ֆոնդի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ  
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

Ֆոնդը պահպանում է ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների տարբեր դիրքեր համաձայն իր ներդրումային կառավարման ռազմավարության: Ֆոնդի ներդրումային պորտֆելն ամբողջությամբ բաղկացած է պարտքային պետական արժեթղթերից: Ֆոնդի ներդրումային պորտֆելի սահմանափակումները կարգավորված են նաև ՀՀ ԿԲ խորհրդի 06 դեկտեմբեր 2011թ. թիվ 337-Ն որոշմամբ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ֆոնդի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

**(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ**

Ֆոնդի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ
- Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք միջոցներ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով
- Այլ պարտավորություններ:

**(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների**

Ֆինանսական ակտիվներ	Իրական արժեքով չափվող		Ամորտիզացված արժեքով չափվող	
	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		-	3,940	110,779
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	659,173	619,459	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք միջոցներ	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>659,173</b>	<b>619,459</b>	<b>3,940</b>	<b>110,779</b>
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	166,640	120,354	-	-
Կրեդիտորական պարտքեր	-	-	556	716
<b>Ընդամենը</b>	<b>166,640</b>	<b>120,354</b>	<b>556</b>	<b>716</b>

**(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք միջոցներ, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով և այլ պարտավորություններ, որոնց

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ  
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

**(դ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական գործիքների իրական արժեքի հիերարխիան ներկայացված է ստորև

<b>31 դեկտեմբերի</b>	<b>Մակարդակ 2</b>	
	<b>2022թ. հազ. դրամ</b>	<b>2021թ. հազ. դրամ</b>
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	659,173	619,459
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	166,640	120,354

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդները ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

**Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ֆոնդը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ֆոնդը փորձում է կառավարել իր պարտքային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ֆոնդը կնքում է վաճառքի և հետգնման պայմանագրեր: Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրեր, Ֆոնդին թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում, կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ֆոնդը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար:

Ֆոնդի պարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<b>2022թ. հազ. դրամ</b>	<b>2021թ. հազ. դրամ</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,940	110,779
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	659,173	619,459
<b>Ընդամենը</b>	<b>663,113</b>	<b>730,238</b>



**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**Դրամական միջոցներ բանկում**

Ֆոնդը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ֆոնդի կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունը վստահելի է և հեղինակավոր: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են մեկ ֆինանսական կազմակերպությունում:

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ֆոնդի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ֆոնդի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ղժվարությունների հետ:

Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Համաձայն Ֆոնդի քաղաքականության՝ Ֆոնդը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ, որպեսզի սահմանված ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Ֆոնդի ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

<b>Մինչև 3 ամիս</b>	<b>2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ</b>	<b>2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ</b>
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	166,640	120,354
Կրեդիտորական պարտքեր	556	716
	<b>167,196</b>	<b>121,070</b>

**Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ**

Ֆոնդին բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ֆոնդի տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ֆոնդի քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

**Արտարժույթային ռիսկ**

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ֆոնդի գործառնական արժույթով չեն պահվում:

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ֆոնդի վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը պայմանավորված է ԱՄՆ դոլարով դրամական միջոցներով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<b>31.12.2022թ.</b>	<b>31.12.2021թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
<b>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>		
ԱՄՆ դոլար	66,509	110,051
<b>Զուտ ակտիվային դիրք</b>	<b>66,509</b>	<b>110,051</b>

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնէր տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների 5,454 հազար դրամով (2021թ.՝ 9,024 հազար դրամով) ավելացման, իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների նվազման՝ նույն գումարների չափով:

**5. Տոկոսային եկամուտ**

	<b>2022թ.</b>	<b>2021թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Պետական գանձապետական պարտատոմսեր	61,642	52,153
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով	-	454
Տոկոսային եկամուտ բանկային հաշվից	24	50
	<b>61,666</b>	<b>52,657</b>

**6. Տոկոսային ծախս**

	<b>2022թ.</b>	<b>2021թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Հետզնման պայմանագրեր	15,573	4,967
	<b>15,573</b>	<b>4,967</b>

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**7. Զուտ կորուստ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից**

	<b>2022թ.</b>	<b>2021թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Պետական գանձապետական պարտատոմսեր	(47,824)	(30,557)
	<b>(47,824)</b>	<b>(30,557)</b>

**8. Ներդրումային կառավարման վճարներ**

Կառավարիչն իրավունք ունի ստանալ պարգևավճար տարեկան Ֆոնդի ակտիվների զուտ արժեքից՝ Դաս A դիմաց 0.4%, Դաս B՝ 1.0% և Դաս C-ի համար 1.85% ի չափով հաշվարկված և հաշվեգրված յուրաքանչյուր գործառնական օրվա համար, որը ենթակա է վճարման ամսական մասնակի մարումների տեսքով: Հաշվետու տարվա համար հաշվարկված կառավարչի պարգևավճարը կազմում էր 4,979 հազար դրամ (2021թ.՝ 6,154 հազար դրամ), որից 373 հազար դրամը ենթակա էր վճարման 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 497 հազար դրամ):

**9. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

	<b>2022թ.</b>	<b>2021թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Պետական գանձապետական պարտատոմսեր	659,173	619,459
	<b>659,173</b>	<b>619,459</b>

**10. Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման պայմանագրով ՀՀ ֆինանսական հաստատություններից ստացված գումարները և դրանց գծով վճարվելիք տոկոսները, որոնց միջին տոկոսադրույթը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ 11.6 տոկոս է, ունեն մարման մինչև մեկ ամիս ժամկետ:

**11. Փայտերերին վերագրելի զուտ ակտիվներ**

Ֆոնդն ունի A, B և C դասի թողարկված փայեր: Փայի մեկ դասի զուտ ակտիվների արժեքը որոշվում է օրական կտրվածքով (ընդհանուր ֆոնդի ակտիվներից ընդհանուր ծախսերի նվազեցումից հետո) նախորդ օրվա զուտ ակտիվների արժեքներին համամասնորեն և կառավարման վճարների կիրառումը փայերի յուրաքանչյուր դասի համար սահմանված դրույքաչափերով: Մարվող փայերը կարող են վերստին ներդրվել ֆոնդում ցանկացած պահի՝ Ֆոնդի տվյալ փային վերագրելի զուտ ակտիվների արժեքին համարժեք կանխիկով: Մարվող փայերը դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություն և չափվում մարման գումարով:

Փայերի քանակներում տեղի ունեցող շարժը և փայատերերին վերագրելի զուտ ակտիվների շարժը ներկայացված է ստորև .

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

<i><b>Փայերի քանակ</b></i>	2022թ.			<b>Ընդամենը</b>
	<b>A</b>	<b>Դաս B</b>	<b>C</b>	
<b>Մնացորդը առ հունվարի 1-ի</b>	<b>51,260</b>	<b>110,122</b>	<b>38,796</b>	<b>200,178</b>
Փայերի թողարկում	25,570	-	-	25,570
Փայերի մարում	(30,430)	(6,584)	(20,143)	(57,157)
<b>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>46,400</b>	<b>103,538</b>	<b>18,653</b>	<b>168,591</b>

<i><b>Փայերի քանակ</b></i>	2021թ.			<b>Ընդամենը</b>
	<b>A</b>	<b>Դաս B</b>	<b>C</b>	
<b>Մնացորդը առ հունվարի 1</b>	<b>72,522</b>	<b>111,764</b>	<b>37,733</b>	<b>222,019</b>
Փայերի թողարկում	-	65	5,667	5,732
Փայերի մարում	(21,262)	(1,707)	(4,604)	(27,573)
<b>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>51,260</b>	<b>110,122</b>	<b>38,796</b>	<b>200,178</b>

<i><b>հազար դրամներով</b></i>	2022թ.			<b>Ընդամենը</b>
	<b>A</b>	<b>Դաս B</b>	<b>C</b>	
<b>Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>164,224</b>	<b>334,973</b>	<b>109,971</b>	<b>609,168</b>
Փայերի թողարկում	76,241	-	-	76,241
Փայերի մարում	(92,277)	(18,701)	(54,810)	(165,788)
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ	(4,723)	(14,132)	(4,864)	(23,719)
<b>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>143,465</b>	<b>302,140</b>	<b>50,297</b>	<b>495,902</b>

<i><b>հազար դրամներով</b></i>	2021թ.			<b>Ընդամենը</b>
	<b>A</b>	<b>Դաս B</b>	<b>C</b>	
<b>Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>231,292</b>	<b>340,473</b>	<b>108,030</b>	<b>679,795</b>
Փայերի թողարկում	-	200	16,286	16,486
Փայերի մարում	(68,786)	(5,093)	(13,404)	(87,283)
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ	1,718	(607)	(941)	170
<b>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>164,224</b>	<b>334,973</b>	<b>109,971</b>	<b>609,168</b>

Ֆոնդի փայերը առաջարկվում են մեկ փայի դիմաց դրա զուտ ակտիվների արժեքով յուրաքանչյուր գործառնական օր՝ համաձայն նախորդ օրվա 15:00 դրությամբ հասանելի տեղեկատվության («զուտ ակտիվների արժեքի որոշման ժամ»): Աշխատանքային օրն այն օրն է, երբ ՀՀ կարգավորող շուկան բաց է: Փայերը կմարվեն զուտ ակտիվների այն արժեքով, որը կգործի զուտ ակտիվների արժեքի որոշման ժամի դրությամբ: Ֆոնդի կողմից ստացված ներդրումային եկամուտը կուտակվում և վերստին ներդրվում է Ֆոնդում և հաշվի է առնվում փայի արժեքը որոշելիս:

2022 թվականի վերջին գործառնական օրվա փակման դրությամբ մեկ փայի զուտ ակտիվի արժեքը, որով մարումները և թողարկումները հասանելի են գործարքների համար, կազմել է.

<b>Դաս</b>	<b>2022</b>	<b>2021</b>
	<b>Դրամ</b>	<b>Դրամ</b>
A	3,091.97	3,203.74
B	2,918.16	3,041.84
C	2,696.30	2,834.57



## **12. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

### ***Արտարժույթային գործարքներ***

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես գուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող գուտ օգուտի կամ վնասի տարբեր:

### ***Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ***

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների գծով զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

### ***Ծախսեր***

Բոլոր ծախսերը, ինչպես նաև ԿԱՄ ՊԱՖ ներդրումային ֆոնդի գծով պարտականությունների իրականացման հետ կապված կառավարչի ծախսերը և վճարները կարող են ծախսագրվել Ֆոնդին: Ֆոնդից գանձվող կառավարման վճարը ներկայացված է ծանոթագրություն 8-ում:

### ***Ֆինանսական գործիքներ***

Ֆոնդը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

***Ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿԿ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ֆոնդը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿԿ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ֆոնդի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿԿ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿԿ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորուստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորուստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

***Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.***

Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ֆոնդը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

Է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ֆոնդը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ֆոնդը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ֆոնդը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

***Ֆինանսական պարտավորություններ***

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿԿ) չափվող կամ «ամորտիզացված արժեքով չափվող» ֆինանսական պարտավորություններ:

***Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ.***

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ֆոնդի կողմից համատեղ դեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿԿ չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ֆոնդի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿԿ չափվող:

ԻԱՇԿԿ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

***Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ***

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

***Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.***

Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ֆոնդի պարտավանությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

***Մարման ենթակա փայեր և մարման ենթակա փայերի փայատերերին վերագրվող գուտ ակտիվներ***

Ֆոնդն առաջարկում է փայերի երեք դաս՝ դաս A, դաս B և դաս C, որոնք էական առումներով հավասարագոր են և ունեն միևնույն պայմանները, բացի կառավարչի պարգևավճարի դրույքաչափից, թողարկման և մարման վճարներից և ներդրումային քաղաքականությունից: Մարման ենթակա փայերը ցանկացած պահի կարող են վերադարձվել Ֆոնդին կանխիկացման նպատակով, պայմանով, որ դրանք կպահվեն առնվազն երկու տարի ժամկետով, և դրանք հավասար են Ֆոնդի՝ փային վերագրելի ակտիվի գուտ արժեքի համամասնական չափին:

Մարման ենթակա փայերը թողարկվում և մարվում են հիմք ընդունելով մեկ փայի դիմաց Ֆոնդի սահմանած գուտ ակտիվի արժեքը՝ հաշվարկված Ֆոնդի գուտ ակտիվների բաժանման եղանակով, համաձայն Ֆոնդի կանոնների : Թողարկված և մարված փայերի դիմաց ստացված հասույթը և կատարված վճարումները հաշվառվում են որպես շարժ փայատերերին վերագրելի գուտ ակտիվների փոփոխությանմասին հաշվետվությունում:

***Արժեթղթերի հետզնման և հակադարձ հետզնման գործարքներ***

Ֆոնդն ունենում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետզնման պայմանագրեր, ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի պայմանագրեր: Ֆոնդն օգտագործում է հետզնման և հակադարձ հետզնման պայմանագրերը որպես իր գանձապետական կառավարման տարր: Ռեալո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը՝ գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ: Ֆինանսական ակտիվները, որոնք վաճառվում են հետզնման պայմանագրերով, շարունակում են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում, իսկ այս պայմանագրերի դիմաց ստացված հատուցումը հաշվառվում է որպես ապահովության միջոց հանդիսացող ավանդ բանկերի հետ ավանդային գործիքներում:

Ֆոնդը կնքում է արժեթղթերի հետզնման պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:



**ԿԱՍ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

***Հարկում***

Ներդրումային ֆոնդերին վերաբերող ՀՀ գործող օրենքի համաձայն Ֆոնդն ազատված է շահութահարկից, եկամտային հարկից կամ կապիտալի հավելաճի և այլ տեսակի հարկատեսակներից: Ֆոնդը հարկվում է տարեկան 0.01% տարեկան զուտ ակտիվների հիման վրա:

**ԿԱՄ Պետական արժեթղթերի ֆոնդ**  
**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ**  
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

**Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ**

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտարկելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

<b>Հոդված</b>	<b>Իրական արժեք, հազար դրամ</b>	<b>Գնահատման մեթոդ</b>	<b>Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ</b>	<b>Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ</b>
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	659,173	Գնանշված արժեք կամ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի՝ շուկայական տոկոսադրույքներով զեղչված արժեք	Մակարդակ 2	կ/չ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք միջոցներ	166,640	Գնանշված արժեք	Մակարդակ 2	կ/չ
Կրեդիտորական պարտքեր	556	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:	Մակարդակ 3	Չկան այդպիսիք